# I

## «ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻՆ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1958 թ. Երևանում սկսվեց հրատարակվել «Պատմաբանասիրական հանդես» գիտական պարբերականը, որը հետագայում աննախադեպ դեր խաղաց նոր հայագիտական մտքի կազմակերպման և վերընթացի պատմության մեջ:

Հանդեսի խմբագրության հիմնադիր կազմում Հայաստանի մի խումբ անվանի հայագետների հետ ընդգրկվեց նաև երիտասարդ խոստումնալից գիտնական Սեն Արևշատյանը՝ իբրև պատասխանատու քարտուղար: Հետագայում նա թեպետ թողեց այդ պաշտոնը, բայց մնաց խմբագրական մարմնի կազմում և արդեն հիսուն երկար ու ձիգ տարիներ նա շարունակում է մնալ Հանդեսի խմբագրության մեջ և իր անուրանալի լուման ներդնել պարբերականի խմբագրական աշխատանքներում:

Ստորև ներկայացվում է ակադեմիկոս Ս. Արևշատյանի հարցազրույցը «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի հետ:

Խմբագրական խորհրդի նիստ.
ձախից աջ՝ Հ. Հովհաննիսյան, Ս. Հարությունյան, Ա. Զաքարյան, Պ. Չոբանյան,
Ա. Դոլուխանյան, Լ. Հովհաննիսյան, Հ. Բարթիկյան:

***Ս. Արևշատյան.*** **– Ինչպե՞ս եք գնահատում 1958 թվականը նոր հայագիտության պատմության ընդհանուր համատեքստում:**

***Ս. Հարությունյան.*** *– Շատ բարձր: Նախ նկատեմ, որ մինչ այդ հրատարակված գիտական պարբերականները ներկայացնում էին գիտակրթական այն հաստատությունները, որոնց տպագիր հանդեսներն էին եղել: «Արարատը», օրի-*

*նակ, ներկայացնում էր Էջմիածնի Միաբանությունը, «Բազմավեպը» ՝ Վենետիկի, «Հանդես ամսօրյան» ՝ Վիեննայի Մխիթարյան Միաբանությունները, Երևանի Համալսարանի Տեղեկագիրը ՝ համանուն համալսարանը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների Տեղեկագիրը ՝ ԳԱ հասարակագիտական բաժանմունքը, «Բանբեր մատենադարանին» ՝ Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և այլն: Այսինքն ՝ բոլորն էլ առաջին հերթին ներկայացնում էին իրենց հաստատություններին շահագրգռող գիտության բնագավառները և ունեին գերատեսչական որոշակի երանգ: Այս պարբերականներում հրատարակված նյութերի մի զգալի մասը, անշուշտ, վերաբերում էր հայագիտությանը և նպաստում վերջինիս զարգացմանը:*

*Սակայն Խորհրդային Հայաստանում աննախընթաց զարգացման հասած հայագիտությունն իր տարբեր մասնաճյուղերով կարիքն ուներ մասնագիտական նոր պարբերականի, որը պետք է արտահայտեր մեր այդ ազգային գիտության հիմնական շահերը և նպաստեր գիտության այդ բազմաճյուղ բնագավառի հարաճուն զարգացմանը: Այդ էր այդ օրերի հրամայականը, և Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը, մանավանդ հասարակական գիտությունների բաժանմունքը իր անվանի ներկայացուցիչներով, հատկապես ԳԱ փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի եռանդուն նախաձեռնությամբ ձեռնարկեցին այդ գործը, որն իրականացավ այդ օրերի ակադեմիայի պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի ջերմ ու գործնական համաձայնությամբ: Պահը ճիշտ էր ընտրված: Ստալինի մահից հետո երկրում տեղի էին ունենում արմատական փոփոխություններ. կյանքում և գաղափարախոսության մեջ աստիճանաբար հաղթահարվում էին անձի պաշտամունքի վտանգավոր հետևանքները, իսկ ԽՄԿԿ 20-րդ - համագումարը ջախջախիչ հարված հասցրեց այդ պաշտամունքին:*

*«Խրուշչովյան ձնհալ». մտավորականության շրջաններում այսպես բնութագրվեց այդ օրերին երկրում կատարվող հեղաբեկումները: Համագումարը խնդիր էր առաջադրել երկրի գիտական կոլեկտիվներին հիմնովին վերակառուցել գիտական աշխատանքների կազմակերպումը: Հայ և մանավանդ հայագետ գիտնականները մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ ընդունեցին գիտական այդ նոր հանդեսի հիմնադրումը: 1958 թ. կեսերին լույս տեսավ «Պատմաբանասիրականի» առաջին հիմնադիր համարը, որը դարձավ նշանավոր տարեթիվ հայագիտության պատմության մեջ առհասարակ:*

*Հանդեսի խմբագրական հանձնաժողովի հիմնադիր կազմի մեջ էին մտնում ժամանակի անվանի հայագետներ Մկրտիչ Ներսիսյանը (գլխավոր խմբագիր), Բաբկեն Առաքելյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Սուրեն Երեմյանը, Լևոն Խաչիկյանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը և ուրիշներ, պատասխանատու քարտուղարն էր երիտասարդ գիտնական Սեն Արևշատյանը: Պրն Արևշատյան, դուք իբրև «Պատմաբանասիրական հանդեսի» անդրանիկ պատասխանատու քարտուղար, ի՞նչ կարող եք մեզ հաղորդել Հանդեսի խմբագրության սկզբնական քայլերի մասին:*

*Ս. Արևշատյան.– «Պատմաբանասիրական հանդեսի» անդրանիկ համարի լույսընծայմանը նախորդեց նախապատրաստական մեծ աշխատանք: Անմոռանալի օրեր էին: Բոլորս տոգորված էինք հայագիտական նոր հանդեսի ստեղծման գաղափարով: Կազմվեց հայագետներից բաղկացած պատկառելի խմբագրական կոլեգիա: Այդ գործի շարժիչ ուժն ու ռահվիրան ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանն էր: Ես նրա օգնականն ու հանձնարարությունները կատարողն էի: 1957 թ. կեսերից ծավալվեց աշխատանքը: Դիմեցինք բոլոր ինստիտուտների և բուհերի աշխատակիցներին, արտասահմանի ճանաչված հայագետներին: Արձագանքը բուռն էր և մեր սպասածից ավելի: Ստացված հոդվածների մեծ քանակը հարկավոր էր կարգավորել, խմբագրել, նախապատրաստել տպագրության: Ստիպված էինք մի քանի հատորների մեջ տեղավորել, ընտրություն կատարելով, նյութերի բազմազանությունն ապահովելով: Ես ձգտում էի ավելացնել դասական բանասիրության և մշակույթի պատմության հարցերին նվիրված հոդվածների քանակը: Դրա շուրջ վեճեր էինք ունենում խմբագրի հետ, որոնք, իհարկե, խաղաղ ելք էին ունենում: Հանդեսի շապիկը, որն անփոփոխ է ցայսօր, ձևավորեց նկարիչ Կարո Տիրատուրյանը: Առաջին համարը լույս տեսավ 1958 թ. և ջերմ արձագանք գտավ և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում: Օգոստոսին գիտնականների մեծ խմբի հետ ես եղա Փարիզում. ինձ հետ տարել էի Հանդեսի առաջին համարը: Պիտի տեսնեիք մեր հայրենակիցների ոգևորությունը: Համարները ձեռքից ձեռք խլեցին, բոլորին չհասավ. նեղացողներ էլ եղան: Բայց խանդավառությունը համատարած էր: Հանդիպումների ժամանակ ես՝ որպես խմբագրության աշխատակից, պատմում էի Հայրենիքում տիրող ոգևորության և այն իրական աշխատանքների մասին, որ կատարվում են Հայաստանի ակադեմիայի հումանիտար ինստիտուտներում, Մատենադարանի շենքի շինարարության ավարտի մասին և այն հոգեկան վերելքի մասին, որով համակված էինք բոլորս՝ «ձնհալի» մթնոլորտում: «Ձնհալը» շուտով ավարտվեց, բայց հայագիտության վերելքը շարունակվեց: Հանդեսը հարատևեց, և փառք Աստծո, նույնիսկ 90-ականների ծանր պայմաններում շարունակեց իր բեղուն կյանքը: Եվ այժմ, հուրախություն մեզ բոլորիս, նշում է իր վաստակած 50-ամյա հոբելյանը:*

*Ս. Արևշատյան.–* **Պրն Հարությունյան, եթե կարելի է, մի քանի վիճակագրական տվյալներ հաղորդեք հանդեսի 50 տարվա գործունեության վերաբերյալ:**

*Ս. Հարությունյան.– Այդ մասին բավական մանրամասն տվյալներ կան իմ տեղակալ Անուշավան Զաքարյանի հրատարակած հոբելյանական հոդվածներում: Այստեղ կբավարարվեմ դրանցից մի քանիսի մատնանշմամբ: Հանդեսն իր հիմնադրման օրվանից մինչև 1990 թ. տպագրվում էր տարեկան չորս համարով, յուրաքանչյուր համարը 15–20 մամուլ ծավալով: Սակայն իրադարձությունների բերումով 1991–1997 թթ. ընթացքում տարեկան տպագրվում էր մեկ կամ երկու համար, մինչև 2000 թ, եղել են նաև միացյալ համարներ, բայց 2000 թվականից ի վեր կանոնավոր ձևով տարեկան հրատարակվում է երեք համար: Մեծ տատանումներ կան տպաքանակի հարցում: Իր հիմնադրման օրվանից և հետագա տարիներին Հանդեսի տպաքանակը 1500-ից հասավ 2400-ի,*

*որ գիտական պարբերականի համար պատկառելի թիվ էր: Սակայն XX դարավերջին և ընթացիկ հարյուրամյակի սկզբներին աշխարհում և մանավանդ մեր հանրապետությունում կատարվող արմատական տեղաշարժերի հետևանքով Հանդեսի տպաքանակը կտրուկ անկում ապրեց ու այն այժմ հասել է 350 օրինակի: Բայց խնդիրը սոսկ տպաքանակի նվազման մեջ չէ, այլ նյութական այն սուղ հնարավորությունների, որ բաժին ընկավ Հանդեսին հասարակական-քաղաքական այդ նոր պայմանների հետևանքով: 1999 թվականից Հանդեսին իր օգնության ձեռքը մեկնեց «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը, որի ֆինանսական աջակցության շնորհիվ, 2000 թ. սկզբներից ի վեր կանոնարկվել է Հանդեսի հրատարակության պարբերականությունը՝ տարեկան երեք մեծադիր համար, որը մեծ նշանակություն ունեցավ թե՛ Հանդեսի աշխատանքները կարգավորելու և թե՛ մանավանդ խմբագրության հարաճուն ծախսերը հոգալու համար: Այս խնդրում մեծ է հատկապես Հիմնադրամի հայկական բաժնի ղեկավար պրն Զավեն Եկավյանի դերը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը և խորին շնորհակալությունը:*

*Այս նույն հիմնադրամի անմիջական ծախքերով են իրականացվում Հանդեսի 1983–2008 թթ. եռալեզու մատենագիտության կազմումն ու տպագրությունը:*

*Այդպիսով, անցած 50 տարիների ընթացքում հրատարակվել է «Պատմաբանասիրական հանդեսի» 176 համար, յուրաքանչյուրը 15–20 մամուլ ծավալով և երկու մատենագիտական համարներ, որոնցից առաջինն ընդգրկում է 1958–1982 թթ. հրատարակված նյութերի 25-ամյա մատենագիտությունը, իսկ երկրորդը՝ 1983–2008 թթ. տպագրված նյութերինը: Եթե առաջին քսանհինգամյակի մատենագիտության պրակը երկլեզու էր՝ հայերեն և ռուսերեն, ապա երկրորդ քսանհինգամյակի պրակը եռալեզու է, կազմված հայերեն, ռուսերեն և անգլերեն: Մատենագիտության եռալեզվայնությունը պայմանավորված է Հանդեսի վերջին տասնամյակների կտրուկ միջազգայնացմամբ:*

*Նշեմ նաև, որ «Պատմաբանասիրական հանդեսը» հիմնականում երկլեզվյա պարբերական է, հոդվածները հրատարակվում են հայերեն և ռուսերեն, իսկ երբ նկատի ենք առնում, որ յուրաքանչյուր հայերեն հոդված մեծ մասամբ օժտված է նաև անգլերեն և ռուսերեն սեղմ ամփոփումով, ապա, թերևս, կարելի է ասել, որ այն եռալեզու հրատարակություն է:*

***Ս. Արևշատյան.–*** **Պրն Հարությունյան, ո՞րն եք համարում «Պատմաբանասիրական հանդեսի» մեծագույն ձեռքբերումը անցնող 50 տարում:**

***Ս. Հարությունյան.–*** *Նախ հարկ եմ համարում նկատել, որ այդ ձեռքբերումը մեկը չէ, այլ մի քանիսն են: Հանդեսն իր հիմնադրման թվականից, նրա հիմնադիր խմբագրի՝ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի թափած եռանդուն ջանքերի շնորհիվ մի մեծ մագնիսի նման սկսեց դեպի ինքը ձգել աշխարհի տարբեր ծայրերում ապրող ու գործող հայագետներին, անկախ նրանց տարաշխարհությունից և տարալեզվայնությունից: Սկսեցին ոչ միայն ուշի ուշով հետևել Հանդեսի պարբերաբար հրատարակվող համարներին, այլև մեծ հետաքրքրություն ցուցաբերել տպագրվող նյութերի նկատմամբ և կարևորը՝ սեփական հետազոտություններով անձամբ մասնակիցը դառնալ Հանդեսի գիտական հրապարակումներին:*

*Այդպես, աստիճանաբար Հանդեսի շուրջը համախմբվեցին հայ և այլազգի հայագետների ու արևելագետների մի պատկառելի բազմություն՝ աշխարհագրական տարբեր տարածքներից: Այստեղ տեղն ու ժամանակը չէ առաջ բերել Հանդեսին հեղինակած բոլոր հայագետների անունները, բայց կարելի է համառոտակի մատնանշել աշխարհագրական այն մշակութային տարածաշրջանները, որոնք մարմնավորել են Հանդեսի հայագետ հեղինակներին: Իսկ եթե նկատի ենք առնում, որ թվելիք տարածաշրջաններից շատերը մարմնավորել են ոչ թե մեկ, այլ մի քանի հայագետների, ինչպես, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը մեկ տասնյակի չափ և դրանից ավելի հայագետների, ապա մոտավորապես պարզ կդառնա աշխարհագրական տարածքների մեծ տարողունակությունը: Սկսենք հյուսիսից հարավ եկող երկրների հերթագայությամբ՝ Անգլիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Բելգիա, Դանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Ռումինիա, Բուլղարիա, Հունգարիա, Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Հունաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Եգիպտոս, Իսրայել, Թուրքիա, Իրան, Հնդկաստան, ԱՄՆ և այլն:*

*Հանդեսի հեղինակային կազմի այս համաշխարհային ընդգրկումը վկայում է մի կողմից նրա միջազգային լայն ճանաչման, մյուս կողմից՝ նրա ձեռք բերած գիտական բարձր հեղինակության մասին, որ արտահայտություն է գտել նաև տարբեր երկրներից Հանդեսի խմբագրությանը հղած նամակներում և մեծահամբավ գիտնականների տված գնահատականներում:*

*Երկրորդ կարևոր հանգամանքը հայագիտական բազմաթիվ խնդիրների սպեկտրային լայն ընդգրկումն է, որով Հանդեսի տարբեր համարներում քննության են դրվել հայոց պատմության տարբեր դարաշրջանների, ներառյալ Կովկասի, արևելյան և արևմտյան երկրների պատմությանն առնչվող կնճռոտ խնդիրներ, աղբյուրագիտական, վիմագրագիտական տարբեր հարցեր ու իրողություններ, Հայաստանի հնագիտության, ազգագրության, մարդաբանության և առհասարակ մշակութաբանության կարևորագույն հարցեր:*

*Հատկապես արդյունավետ են եղել հայ ժողովրդի ծագման և ձևավորման, Ուրարտուի պատմության ու մշակույթի, Հին և Միջնադարյան Հայաստանի քաղաքների, մայրաքաղաքների, հայ գաղթավայրերի պատմության, Հին Հայաստանի պատմական աշխարհագրության, հայ-իրանական, հայ-բյուզանդական, հայ-ասորական, հայ-արաբական, հայ-լեհական, հայ-ուկրաինական, հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների, հայ դրամագիտության, Հայոց ցեղասպանության, հայոց պատմության կեղծարարությունների դեմ ուղղված քննադատական տարբեր խնդիրներ, հայագիտության պատմության և նշանավոր հայագետների դիմապատկերներին նվիրված հոդված-հետազոտություններ:*

*Հետազոտվել են հայոց լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերի հատկանիշները, բարբառներն ու բարբառագիտությունը, հնչյունաբանությունը, բառագիտությունն ու բառակազմությունը, շարահյուսության, քերականական կարգերի ու կառույցների հետ կապված երևույթներ ու խնդիրներ, կա-*

*տարվել են բառերի ստուգաբանություններ հայերենի և հնդեվրոպական այլ լեզուների հետ համեմատական քննություններ, հայ գրողների լեզվական հատկանիշների ուսումնասիրություններ:*

*Առանձնակի հարստությամբ ու բազմազանությամբ են հատկանշվում գրականագիտական հետազոտությունները, որոնք վերաբերում են հայ հին և միջնադարյան, նոր և նորագույն շրջանների գրական դեմքերի ու իրողությունների քննությանը: Առանձնապես արդյունավետ է եղել հայ նոր և նորագույն շրջանի գրական երևույթների ու խնդիրների հետազոտությունը, որ աչքի է ընկնում տեսական-գրականագիտական, գրապատմական և բանասիրական հարցերի պարզաբանումներով, գրական դիմանկարներին, նրանց ժառանգության գնահատմանը, խորհրդահայ բանաստեղծության, դրամատուրգիայի սկզբնավորմանը, հայ նոր գրականության ժանրերին, գրական և քննադատական հոսանքների պատմությանը, հայ-ռուս, հայ-եվրոպական գրական կապերին, գրողների ստեղծագործությունների տիպաբանական համեմատություններին, որոնցով խիստ ընդլայնվում ու հարստանում է գրական խնդիրների ընդգրկումն ու լուսաբանումը:*

*Քննվել և լուսաբանվել են հայ հին ու նոր բանահյուսության տարբեր ժանրեր (հեքիաթ, էպոս, ավանդազրույց, հանելուկ, վիպաքնարական երգեր), հայ բանագիտության պատմության, հայ առասպելաբանության, ժողովրդական հավատալիքների, ծեսերի և ծիսերգերի հետ առնչվող զանազան հարցեր:*

*Բավական լայնքով ու խորքով ուսումնասիրվել են հայ փիլիսոփայական մտքի պատմության զարգացման տարբեր էտապները, հին և ուշ միջնադարյան փիլիսոփայության, աստվածաբանության, գեղագիտության ներկայացուցիչների երկերն ու բերած նորությունները, նորագույն փիլիսոփայության ու քաղաքական մտքի պատմության տեսական խնդիրները:*

*Հանդեսում արժանի ձևով են ներկայացվել և լուսաբանվել Հին Հայաստանի իրավաբանական մտքի և իրավական հարաբերությունների պատմությունը և մանավանդ հայ արվեստի, ճարտարապետության, հատկապես տարբեր ժամանակների կերպարվեստի (քանդակագործություն, մանրանկարչություն, կիրառական արվեստներ), թատերական ու երաժշտական արվեստի պատմության ու տեսության լայն ընդգրկումներով:*

*Այլևս չենք խոսում Հանդեսում պարբերաբար հրատարակվող տարբեր գիտաճյուղերի և գիտական իրադարձությունների մասին արդիական հարուստ տեղեկատվության մասին, որ տարբեր խորագրերով ներկայացնում են հայագիտության և հասարակական մյուս գիտությունների բնագավառում Հայաստանում ու արտասահմանում կատարվող հիմնական նորույթները:*

*Երրորդ կարևոր ձեռքբերումն այն է, որ Հանդեսը հենց առաջին համարից որդեգրեց դասական հայագիտության կայուն ավանդները և հայագիտական ուսումնասիրությունները առաջ է տանում դասականի մակարդակով ու դրանով առաջն առնում սիրողական դիլետանտական և ազգային սնապարծական մղումներով առաջնորդվող հոդվածների ու հրապարակումների, որոնցով, ցավոք, միշտ էլ առատ է եղել մեր «գիտական» շուկան:*

*Բացի անցյալի ավանդների պասիվ ժառանգականությունից, Հանդեսն սկսեց անողոք պայքար ծավալել հակահայկական ու հակագիտական հրապարակումների դեմ՝ հիմք դնելով գիտական տարբեր բանավեճերի (հայ բարբառագիտության խնդիրներ, հայ գրի ու գրականության սկզբնավորում, հայ հասարակական-քաղաքական մտքի պայքար, նոր հայերենի ուղղագրության հարցեր, Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված բանավեճեր և այլն):*

*Չորրորդ ձեռքբերումն այն է, որ Հանդեսը հայագիտական մտքի կազմակերպման բնագավառում բացառիկ դեր է խաղացել: Հանդեսում տպագրվող նյութերը, փաստորեն, անցնում են գիտական մի լրջագույն փորձաշրջան և, եթե ճիշտ քննություն են բռնում, ապա գիտականապես արմատավորվում են, փոխատեղվում հեղինակների մենագրությունների և գիտական այլ հրատարակությունների մեջ, դառնում հիմնարար տեսակետներ և ընդհանրանում: Սա շատ կարևոր հանգամանք է Հանդեսի գիտահետազոտական արժեքը գնահատելու տեսակետից, որը երբեմն չի էլ գիտակցվում:*

*Հանդեսի միջազգային պատշաճ հեղինակություն վաստակելու վկայություններից են EBSCO Մասաչուսետսի հրատարակչական կազմակերպության կողմից Հանդեսի խմբագրությանը հղված նամակները, որոնցով Հանդեսին խնդրում են անդամակցել իրենց կազմակերպությանը, որը գլոբալ ընդգրկում ունի և գալու է միջազգայնորեն առավել ներկայացուցչական դարձնելու Հանդեսն ու այն մարմնավորող հայագիտությունը:*

***Ս. Արևշատյան.*** **– Պրն Հարությունյան, թույլ տվեք մի վերջին հարցում ևս ուղղել Ձեզ: Իբրև Հանդեսի գլխավոր խմբագիր՝ ո՞րն եք համարում Ձեր կարևոր դերը Հանդեսի երկրորդ կեսդարյա ժամանակաշրջանը թևակոխելու պատմական այս պատասխանատու պահին:**

***Ս. Հարությունյան.*** *– Կարծում եմ, սխալված չեմ լինի, որ ասեմ՝ թե՛ իմ և թե՛ իմ նախորդի՝ երջանկահիշատակ ակադեմիկոս և անվանի պատմաբան Վարդգես Միքայելյանի (որն աչքի էր ընկնում գիտական ժուռնալիստիկայի բնագավառում իր ունեցած բացառիկ հարուստ փորձառությամբ) առաջնահերթ խնդիրը եղել է նախ պահպանել ու առավել ևս զարգացնել «Պատմաբանասիրական հանդեսի» արդեն ստեղծած կայուն ավանդները և նրա էջերում կարելույն չափ շատ լայնքով ու խորքով լուսաբանել արդի հայագիտության միտքը հուզող թեմաներն ու խնդիրները: Գիտական ժառանգականությանը հետևելն առհասարակ պարտադիր է յուրաքանչյուր գիտության պրոբլեմների ճիշտ ըմբռնման և նորոգ մեկնաբանությունների համար, իսկ առհասարակ ապահովում է գիտության շարունակականությունն ու ավանդականությունը, որը խիստ անհրաժեշտ է հայագիտության համար:*